

Մայիսի 17-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 22 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Նոր Մարագա գյուղի համայնքային կենտրոնի կառուցման հեղինակային հսկողություն» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 մանկապարտեզի խաղահրապարակի կառուցում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Արաբկիր եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 149, 151, 153 և 156 մանկապարտեզների ու երեք անապահով ընտանիքի համար կահույքի ձեռքբերում», «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Տավուշի մարզի 20 համայնքների և Գեղարքունիքի մարզի 10 համայնքների բնակչության համար առողջապահական գրականության տպագրում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի համայնքի կաթի հավաքման և պահպանման կետի համար կաթի սառեցնող տարողության տրամադրում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի, Հովունի, Մարմաշեն գյուղի երեխաների առողջ սննդի և տեսողության խնամքի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի համայնքի կովերի մթերատվության բարձրացում ցեղատեսակի բարելավման միջոցով», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք, Սառնակունք և Քարահունջ համայնքների բուժկետերի մասնակի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» և «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի համայն-

քների համար «Գյուղատնտես-սուխան արդյունավետության բարձրացում» թեմայով դասընթացների կազմակերպում» ծրագրերը.

«Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անի Բեգիկյան» երիտասարդական կենտրոն» ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի համար ձիաբուժության հիմնադրում» ծրագիրը.

«Հանգրվան» առողջապահական-մշակույթային հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կույր և թույլ տեսնող երեխաներին ժամանակակից բրայլյան դիդակտիկ պարագաների տրամադրում» ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բանդիվան համայնքի ներքին ջրային ցանցի վերակառուցում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնքի ներքին ջրային ցանցի վերակառուցում» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գոգհովիտ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում» ծրագրերը.

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նշավանում հասարակական կենտրոնի կառուցում» ծրագիրը.

«Հովհանես Իմաստասեր Կաթողիկոս Օձունեցի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագիրը.

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ապրել միասին, սովորել միասին» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: